

ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Թիվ 1 (71)
2016 թ.

Գլխավոր խմբագիր՝
Ի.գ.թ., պրոֆ. Լևոն Օհանյան

Հիմնադիր և հրատարակիչ՝
ՀՀ իրավաբանների միություն,
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ

Խ մ բ ա գ ր ա կ ա ն խ ո Ր Ի Ո Ւ Ր Պ

Սամվել Դիլբանդյան -

Ի.գ.դ., գլխավոր խմբագրի տեղակալ
Կարեն Գևորգյան -

Ի.գ.թ., գլխավոր խմբագրի տեղակալ
Աշոտ Պետրոսյան -

պատասխանատու քարտուղար
Գևորգ Դանիելյան - Ի.գ.դ.

Հարություն Խաչիկյան - Ի.գ.դ.

Արմեն Հայկյանց - Ի.գ.դ.

Դավիթ Ավետիսյան - Ի.գ.թ.

Արթուր Վաղարշյան - Ի.գ.դ.

Սերգեյ Առաքելյան - Ի.գ.դ.

Վիգեն Քոչարյան - Ի.գ.թ.

Խմբագրության հասցեն՝
ՀՀ, 0025 Երևան,
Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ
իրավագիտության ֆակուլտետ:
Հեռ. 060-71-02-47
Էլ. կայք՝
[http://ysu.am/faculties/hy/Law/
section/structure/amb/48439](http://ysu.am/faculties/hy/Law/section/structure/amb/48439)

Խմբագրությունը կարող է
հրապարակել նյութեր՝ համամիտ
չլինելով հեղինակների
տեսակետներին:
12 համակարգչային էջից ավելի
չպատվիրված նյութերը չեն
ընդունվում:
e-mail: a_petrosyan@ysu.am
Դասիչ՝ 77771
Տպագրական 7 մամուլ
Գրանցման թիվը՝ 798
Տպաքանակը՝ 500
Գինը՝ պայմանագրային
Հանձնված է շարվածքի
4.04.2016
Հանձնված է տպագրության
18.04.2016

СОЮЗ ЮРИСТОВ РА
ЮРИДИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ ЕГУ

ГОСУДАРСТВО И ПРАВО

Номер 1 (71)
2016 г.

Главный редактор:
к.ю.н., проф. Левон Оганян

Учредитель и издатель:
Союз Юристов РА,
Юридический факультет ЕГУ

Редакционный совет

Самвел Дилбандян -

д.ю.н., зам. главного редактора

Карен Геворгян -

к.ю.н., зам. главного редактора

Ашот Петросян -

ответственный секретарь

Геворг Даниелян - д.ю.н.

Арутюн Хачикян - д.ю.н.

Армен Айкянц - д.ю.н.

Давид Аветисян - к.ю.н.

Артуր Вагаршян - д.ю.н.

Сергей Аракелян - д.ю.н.

Виген Кочарян - к.ю.н.

Адрес редакции:
РА, 0025 Ереван,
ул. Алека Манукяна 1,
юридический факультет ЕГУ.
Тел.: 060-71-02-47
e-mail: a_petrosyan@ysu.am
web: [http://ysu.am/faculties/hy/Law/
section/structure/amb/48439](http://ysu.am/faculties/hy/Law/section/structure/amb/48439)

8 усл. печ. л.
Тираж: 500
Сдано в набор 04.04.2016
Подписано к печати 18.04.2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Վիկտորյա Օհանյան

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՐՔՅՈՒՐՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒԹԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ
ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՈՒՄ..... 5

Ալվարո Ալեքսանյան

ՄԵՍՐՈՊ ԹԱՐԻԱՂԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ 15

Կարեն Ամիրջյան

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃԻՐՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ 22

Անահիտ Սարգսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՋՄԱԿԵՐՊԱԿԱՆ-ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՀԻՄՆՈՒՄԸ ԵՎ ԿԱՅԱՑՈՒՄԸ..... 35

Նելլի Հովսեփյան

XIX դարի ՀԱՅ ՄՏԱԾՈՂՆԵՐԻ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՁԵՎԻ ՄԱՍԻՆ 42

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Վարդան Այվազյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԿԱՅԱՑՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ 52

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Գուրգեն Մեղոյան

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՇԱՀԱԳՐԳՈՎԱԾՈՒԹՅԱՄԲ
ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՈՒՄՆ ԱՌԱՆՑ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ
ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ..... 60

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Գոհար Հակոբյան

ԲԺՇԿԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԲԺՇԿԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ
ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՀԱՆՑԱԿԱՋՄԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ. ԻՆՉՆ Է ԵՆԹԱԿԱ
ՓՈՓՈՒՆՈՒԹՅԱՆ..... 68

Գոռ Միրզոյան

ՄԱՔՍԱՆԵՆԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՇԱՐԺՆԹԱՑԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ..... 76

Լալա Գրիգորյան

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԲՆՈՐՈՇՄԱՆ
ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ..... 87

Հռիփսիմե Խաչատրյան

ԱՆՁԱՓԱՀԱՄՆԵՐԻ ԽՄԲԱՅԻՆ ՀԱՆՑԱԿՈՐՈՒԹՅԱՆ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 95

Էդգար Կարապետյան

ԻՐԱՎԱՔԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱԽՍԱՆԱՏԿՈՒԹՅԱՆ
ԱՌԱՆՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՑ
ՆԵՐԴՐՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 103

Լաուրա Ջոհրաբյան

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՎԵՃԵՐԻ ԾԱԳՄԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ 114

Աննա Ղարսյան

ՏԵՐՄԻՆԱՅԻՆ ԲԱԶՄԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀՈՄԱՆԻՇՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ
ՀԱՅԵՐԵՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԼԵԶԿԻ ԲԱՌԱՊԱՇԱՐՈՒՄ 120

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒԹԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Վիկտորյա Օհանյան

*ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության
ամբիոնի դոցենտ, իրավ. գիտ. թեկնածու*

Հասարակական հարաբերություններում իրավունքի կենսագործմանը հասնելու հնարավորությունն ապահովվում է իրավական կարգավորման կառուցակարգի արդյունավետ գործառնման շնորհիվ: Իրավական կարգավորման կառուցակարգի գործառնության կառուցվածքի վերաբերյալ մոտեցումները հետազոտելիս կարելի է առանձնացնել երկու հիմնական միտում: Դրանցից առաջինը իրավական կարգավորման կառուցակարգի՝ որպես իրավական միջոցների և ձևերի համակարգի ըմբռնումն է, որի օգնությամբ իրականացվում է իրավական կարգավորումը, և դրա կազմում այնպիսի գործառնության փուլերի առանձնացումը, ինչպիսիք են իրավունքի նորմի հրապարակումը և դրա ընդհանուր ներգործությունը, սուբյեկտիվ իրավունքների և պարտականությունների առաջացումը, դրանց իրականացումը և կենսագործումը կոնկրետ հասարակական հարաբերությունների մասնակիցների վարքագծում, ինչպես նաև՝ իրավունքի կիրառումը¹: Երկրորդ միտումը հանգում է իրավական կարգավորման կառուցակարգի ըմբռնմանը լայն իմաստով՝ որպես իրավական կարգավորման սոցիալական դինամիկ համակարգի հիմքի, որի առավել ամբողջական մոդելը ենթադրում է համակարգի ներսում հետևյալ ենթակառուցակարգերի կամ գործառնության փուլերի առկայություն՝ իրավունքի ձևավորում, իրավաստեղծագործություն, իրավական տեղեկացում, իրավունքի իրականացում, սոցիալ-իրավական վերահսկողություն²: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ *իրավական կարգավորման սոցիալական կառուցակարգի* գաղափարը զուտ իրավաբանական երևույթներից բացի ընդգրկում է նաև օբյեկտիվ և սուբյեկտիվ սոցիալական գործոնները, որոնք հնարավորություն են տալիս ամբողջական պատկերացում կազմելու իրավունքի՝ որպես կարգավորչի նպատակների իրականացման պայմանների և գործընթացի մասին, իրավունքի աղբյուրներն իրավական կարգավորման կառուցակարգի համատեքստում ուսումնասիրելիս հիմք կընդունենք իրավական կարգավորման սոցիալական կառուցակարգը, դրա ենթակառուցակարգերը և փուլերը՝ հատկապես ուշադրություն դարձնելով իրավաստեղծագործության և իրավունքի բուն իրականացման փուլերին:

Իրավաբանական իրավահասկացության դիրքերից՝ իրավունքի իրականացման և դրա եզրափակիչ փուլի՝ պոզիտիվ իրավունքի կենսագործման ընթացում ի-

¹ Իրավական կարգավորման կառուցակարգի փուլերի վերաբերյալ այս դիրքորոշումը կարելի է համարել ավանդական: Տե՛ս օրինակ՝ **Комаров С.А.**, *Общая теория государства и права*. М.: 2012, էջ 384, ինչպես նաև՝ *Теория государства и права*. Под ред. Корельского В.М., Перевалова В.Д., М.: 1997, էջ 269:

² Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Социология права. Под ред. Сырых В.М., М.: 2002, էջ 100, ինչպես նաև՝ **Քոչարյան Ս.Ս.** *Իրավաբանական իրավահասկացողությունը և օրինականության հիմնախնդիրները*, Երևան, 2008, էջ 143:

րավունքի աղբյուրներն գործառական ընդգծված նշանակություն են ձեռք բերում հենց իրավաստեղծագործության (իրավունքի պոզիտիվացման՝ օրենսդրական և ենթաօրենսդրական գործունեության) և իրավունքի բուն իրականացման՝ անձանց վարքագծում իրավական կարգադրագրերի կենսագործման փուլերում¹: Ընդ որում՝ հիշատակված երկու փուլերից առաջինում՝ պոզիտիվացման գործընթացում, ընտրվում է իրավունքի արտաքին արտահայտման համապատասխան ձև՝ իրավունքի աղբյուր, ինչն ազդեցություն է թողնում իրավական կարգադրագրերի կենսագործման գործընթացի արդյունավետության վրա:

Իրավաստեղծագործության փուլում իրավունքի աղբյուրների նշանակությունը հիմնականում դրսևորվում է արժեքային հարթությունում՝ իրավական գնահատականի հիմնախնդրի համատեքստում: Իրավաստեղծագործության գործընթացում իրավաստեղծագործության սուբյեկտի կողմից հասարակական հարաբերություններին տրվում է իրավական գնահատական՝ էլեմենտը դրանց կարևորությունից և կարգավորման, պահպանման կամ բացառման անհրաժեշտությունից: Այդ գնահատականը ուղղակիորեն կախված է սուբյեկտի արժեքային դիրքորոշումից, որի լուսի ներքո իրավական կարգավորման պահանջունքները բավարարվում են իրավաստեղծագործության սուբյեկտի կուտակած և նրա գիտակցությամբ միջնորդավորված սոցիալական փորձին համարժեք²: Իրավական կարգավորման մակարդակի, հետևաբար և իրավունքի արտաքին արտահայտման ձևի կամ իրավունքի աղբյուրի ընտրությունը իրավաստեղծագործության սուբյեկտի գնահատողական գործունեության մի մասն է և որպես այդպիսին՝ կրում է իրավաստեղծագործության սուբյեկտի իրավական գաղափարախոսության և իրավական հոգեբանության ազդեցությունը: Միևնույն ժամանակ հիմնավոր պետք է համարել այն դատողությունը, որ իրավունքի պոզիտիվացման գործընթացը, իրավունքի օբյեկտիվ որակների ու պահանջների հաշվառման անհրաժեշտությունից բացի, կախված է բազմաթիվ այլ օբյեկտիվ ու սուբյեկտիվ գործոններից՝ տնտեսական, սոցիալական, քաղաքական, հոգևոր, մշակութային և այլն³: Որպես հետևանք՝ իրավունքի աղբյուրի ընտրությունը շատ հաճախ տեղի է ունենում ձևավորված իրավական մշակույթի ու քաղաքական կուրսի թելադրանքով՝ երկրորդ պլան մղելով իրավունքի աղբյուրի ընտրության այնպիսի օբյեկտիվ չափանիշ, ինչպիսին է իրավական կարգավորման կառուցակարգի արդյունավետ գործառման համար պիտանի լինելը:

Իրավունքի բուն իրականացման փուլի համատեքստում իրավունքի աղբյուրները դիտարկվում են թե՛ տեղեկատվական և թե՛ արժեքային հարթություններում: Իրավունքի աղբյուրների նշանակությունը իրավական կարգավորման սոցիալական կառուցակարգի այս փուլի համար հիմնականում կապվում է այն ազդեցության հետ, որը իրավունքի աղբյուրի տեսակը և այլ աղբյուրների համակարգում դրա տեղը կարող են թողնել իրավունքի իրականացման գործընթացի վրա: Այս առումով հետաքրքրություն է ներկայացնում իրավունքի իրականացման՝ որպես իրավունքի նորմի գործողության սոցիալական նպատակների իրականացման գործընթացում այնպիսի կառուցակարգի առանձնացումը, ինչպիսին է իրավական սոցիալիզացիա-

¹ Այդ մասին տե՛ս Վաղարշյան Ա.Գ. Իրավաբանական իրավահասկացողությունը և «իրավունքի իրականացում» հասկացության հիմնախնդիրները// Իրավագիտության հարցեր, թիվ 3, 2006, էջ 6-9:

² Տե՛ս Новиченко А.А., Правовая оценка и ее основания// Государство и право, No. 2, 2006, էջ 83-84:

³ Տե՛ս Проблемы общей теории права и государства. Под ред. Нерсесянца В.С., М.: 2001, էջ 240-241:

յի կառուցակարգը¹: Որպեսզի իրավունքի նորմը իրականացվի, այն պետք է ընկալվի իրավահարաբերությունների մասնակիցների կողմից, փոխադրվի նրանց իրավագիտակցություն, արտացոլվի նրանց շարժառիթներում, պահանջմունքներում և նպատակներում: Իրավական սոցիալիզացիայի կառուցակարգը, փաստորեն, հիմքեր է ստեղծում անձի իրավաչափ վարքագծի դրսևորման համար, որը, մի կողմից լինելով իրավունքի կենսագործման առաջնային պայման, միևնույն ժամանակ նաև գործընթաց է, իրավունքի կենսագործման գործընթացի բովանդակային կողմ և վերջապես՝ իրավական կարգավորման կառուցակարգի հիմնական իրավաբանական նպատակ:

Վերջին տարիներին իրավագիտությունը գնալով ավելի է դիտարկվում որպես գիտություն իրավական ոլորտում մարդու սոցիալական վարքագծի մասին. վարքագիծը համարվում է իրականացված իրավունքի վերջնական արդյունք²: Վարքագծի նկատմամբ իրավագիտության մեջ հետաքրքրության աճի միտումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ժամանակակից իրավագիտության մեջ տեղի է ունենում մեթոդամանական հիմքերի նորացում և հարստացում, անցում իրավական կատեգորիաների դոգմատիկ մեկնաբանությունից և վարքագծի վրա պետության նորմաստեղծ գործունեության ազդեցության գերազնահատումից դեպի իրավունքի ուսումնասիրություն դիմամիկայի համատեքստում, «իրավունքը կյանքում» և որպես հետևանք՝ դեպի իրավունքի գործողության ողջ գործընթացի ուսումնասիրություն: Պոզիտիվիզմը «հնանում է» իր տեղը զիջելով սոցիոլոգիական ուղղվածության տարր պարունակող գիտական մտքի ուղղություններին: Այս գործընթացից անմասն չի մնացել նաև հետխորհրդային, մասնավորապես՝ ռուսական իրավական միտքը³: Իրավաչափ վարքագիծը որպես «ոչ իրավաչափ վարքագծի» հակաբևեռ բնորոշելու և իրավաչափ վարքագծի սոցիալական բնութագրերը գրեթե անտեսելու ավանդական մոտեցումներին⁴ զուգընթաց՝ հիմնավորվում են իրավաչափ վարքագծի վերաբերյալ նոր՝ սոցիոլոգիական–իրավական մոտեցումներ, որոնք բարձրացնում են իրավաչափ վարքագծի դերը և սոցիալական արժեքը՝ բնորոշելով այն որպես մարդու մշակութային–բարոյական հայացքներով և կենսափորձով պայմանավորված գործունեություն իրավունքի սոցիալական գործողության ոլորտում, որը հիմնված է մարդու կողմից իրավունքի նպատակների և պահանջների գիտակցված իրականացման վրա⁵:

Ինչպես արդեն նշվեց, իրավաչափ վարքագիծը հանդես է գալիս ոչ միայն որպես իրավունքին համապատասխանող իրական գործողությունների համախումբ (արդյունք), այլև նախ և առաջ որպես գործընթաց, որի դեպքում իրավունքի (և պետության) ուղղակի կամ անուղղակի ներգործության ներքո կամ առնվազն դրան հա-

¹ Իրավական սոցիալիզացիան բնորոշվում է որպես հարկադրանքի սպառնալիքով պայմանավորված իրավաչափ վարքագծի փոխարինում այնպիսի գործիքով, որը դրսևորվում է անհատի կողմից իրավունքի նորմերում նախանշվող վարքագծի մոդելների և իրավական արժեքների հասարակության նորմալ կենսագործունեության համար անհրաժեշտ լինելու փաստը գիտակցելու և արժևորելու արդյունքում: Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Социология права. Под ред. Сырых В.М., М.: 2002, էջ 112-114:

² Տե՛ս օրինակ՝ Общая теория государства и права. Том III. Под ред. Марченко М.Н., М.: 2002, էջ 383:

³ Տե՛ս **Алексеев С.С.**, Право на пороге нового тысячелетия. М., 2000, էջ 101-115:

⁴ Տե՛ս օրինակ՝ Теория государства и права. Под ред. Матузова Н.И., Малько А.В., М.: 1997, էջ 524-539:

⁵ Տե՛ս Общая теория государства и права. Том III. Под ред. Марченко М.Н., М.: 2002, էջ 388:

մապատասխան՝ մարդու ներքին վիճակը վերածվում է գործողությունների սոցիալապես արժևորվող օբյեկտների նկատմամբ¹: *Որպես գործընթաց՝ իրավաչափ վարքագծի դրսևորման կապն իրավունքի աղբյուրների հետ բացահայտվում է իրավական կարգավորման կառուցակարգի գործառական փուլերի համատեքստում քննարկված երկու՝ թե՛ տեղեկատվական և թե՛ արժեքային հարթություններում*: Անդրադառնանք այդ հարթություններից յուրաքանչյուրին առանձին:

1. *Տեղեկատվական հարթություն*: Իրավաչափ վարքագծի դրսևորումը գործունեություն է, որը ամեն դեպքում հնարավոր չէ առանց չափորոշիչի՝ իրավունքի նորմի իմացության:

Իմացության՝ որպես պայմանի մասին հիշատակում կարելի է գտնել դեռևս Աստվածաշնչում²: Ժամանակակից իրավագիտությունը իրավունքի նորմերին իրազեկումը քննարկում է միայն իրավական դաստիարակության ու իրավական մշակույթի բարձրացման համատեքստում: Սակայն իրականում իրավունքի այնպիսի ընդհանուր սկզբունքներ, ինչպիսիք են, օրինակ, օրինաստեղծագործության հրապարակայնությունը, օրենքների իրավաբանական ուժի կապումը դրանց հրապարակման հետ, վկայում են այն մասին, որ տեղեկացվածությունը իրավաբանորեն արժևորվող երևույթ է, որի հետ իրավունքը որոշակի հետևանքներ է կապում: Իրավունքի աղբյուրը՝ որպես նորմի արտաքին արտահայտման ձև, էական դեր է խաղում նորմը հասցատեղերին հասցնելու գործում: Մյուս կողմից՝ իրավաբանորեն հարկադրելի վարքագծի կանոնների արտահայտումը միշտ իրականացվում է որոշակի իրավական ձևի շրջանակներում (օրենքը որոշակի ձև է սահմանում ենթաօրենսդրական ակտերի, մասնավոր-իրավական պայմանագրերի համար, նախատեսվում են դրանց բովանդակությունը վեր հանելու որոշակի կառուցակարգեր (այլ փաստաթղթերով ապացուցման հնարավորություն): Այլ կերպ ասած՝ իրավունքի ներգործության ոլորտում կանոնը կիրառելի է, եթե հայտնի է այն աղբյուրը, որից հնարավոր է քաղել այդ կանոնի բովանդակությունը: Դա կապված է իրավունքի նորմի այնպիսի էական հատկանիշի հետ, ինչպիսին է ձևական որոշակիությունը: Ավելին՝ ձևական որոշակիությունը հատկանիշ է, որը բնորոշ է ընդհանրապես իրավունքին իր բոլոր դրսևորումներով: Դիտարկելով «իրավունքի աղբյուր» կատեգորիան իրավական կարգավորման կառուցակարգում դրա նշանակության համատեքստում՝ կարելի է փաստել, որ հենց իրավունքի աղբյուրն է այն անկյունաքարը, որը իրավական կարգավորման շրջանակներում ապահովում է կիրառվող իրավունքի ձևական որոշակիության հատկանիշի իրացումը:

Իրավունքի նորմի որոշակիությունն ու ճշգրտությունը իրավունքի աղբյուրի հետ կապելու միտումը կարելի է նկատել դեռևս Կորկուսովի մոտ: Նրա բնորոշմամբ՝ «Իրավունքի աղբյուրի նշանակությունն առաջին հերթին այն է, որ վերջինիս օգնությամբ յուրաքանչյուրը կարող է նախապես *հնարավորինս ճշգրիտ, որոշակի ճշգրտությամբ* պարզել, թե ինչ պարտադիր պահանջներ պահանջելու դեպքում ապահովված կլինի այլոց պահանջներից»³:

Իսկապես, որքան էլ նորմը համարենք բովանդակության առումով խիստ որոշակի և ընդհանրական վարքագծի կանոն, որքան էլ շեշտադրենք այն հանգամանքը, որ ձևական որոշակիությունը իրավունքի և դրա նորմի իմանենտ հատկանիշն է, պետք է հիշենք, որ *ձևական որոշակիության պահանջը թելադրում է որոշակիության անհրաժեշտություն՝ կապված նորմի արտահայտման ձևի հետ*: Իրավաբանական

¹ Ст'у Общая теория права и государства. Под ред. Лазарева В.В., М.: 1996, էջ 391-392:

² Թուղթ Յակոբու, 4:17 (Ուստի ով որ բարին ընելը գիտնայ ու չընէ, ան մեղք է անոր):

³ Коркунов Н.М., Лекции по общей теории права. СПб.: 2004, էջ 283:

(օրենսդրական) տեխնիկայի կանոնները ծառայում են նորմի արտաքին արտահայտությունը, այլ ոչ թե ներքին բովանդակությունը որոշակիացնելու նպատակին: Պատահական չէ, որ իրավաբանական գրականության մեջ նորմը բնութագրող հատկանիշների շարքում ձևական որոշակիությունից անմիջապես ածանցվում է նորմերի գրավոր, փաստաթղթային ձևի առկայությունը և նշվում է, որ նորմերի արտահայտման այսպիսի ձևը հնարավորություն է տալիս իրավունքի նորմեր իրացնող բոլոր սուբյեկտներին իրավունքի բովանդակության, գործողության սահմանների և այլ անհրաժեշտ հանգամանքների մասին ունենալ հստակ և ճշգրիտ պատկերացում, որը հնարավոր է միայն այն դեպքում, երբ իրավական նորմերը «հրապարակվում են» կամ «հրապարակայնորեն հայտարարվում են»: նորմերի ձևական, գրավոր ամրագրումը անխզելիորեն կապված է իրավունքի «հրապարակայնության», բոլորի և յուրաքանչյուրի համար դրա մատչելիության հետ¹: Այս կապակցությամբ իրավունքի աղբյուրները երբեմն բնորոշվում են որպես իրավունքի նորմերի արտահայտման և ամրագրման, դրանց իրավաբանական նշանակություն հաղորդելու՝ պետությունից ելնող կամ դրա կողմից պաշտոնապես ընդունված *փաստաթղթային միջոցներ*²:

Վերջապես նորմի ձևական որոշակիությունը հնարավոր չէ պատկերացնել առանց դրա արտահայտման ձևի որոշակիության: Իրավունքի բովանդակության և արտահայտման ձևերի մեջ որոշակիության բացակայության պարագայում իրավունքը ունակ չէ կարգավորելու հասարակական հարաբերությունները: Հիմնավոր է թվում իրավաբանական գրականության մեջ արտահայտված այն տեսակետը, որ ձևական որոշակիությունը լայն առումով իրավունքի հատկությունն է (*հիմնականում տեքստային աղբյուրների միջոցով*) առավելագույնս հստակ ամրագրել, ձևականացնել իրավական կարգավորում պահանջող փաստական իրադրությունների անհրաժեշտ հատկանիշները, ինչը հիմք է տալիս հավասարության նշան դնելու «ձևական որոշակիություն» և «իրավունքի որոշակիություն» հասկացությունների միջև³:

Վերոհիշյալը թույլ է տալիս հանգել հետևյալ եզրակացության. հասարակությունում իրավաչափ վարքագծի տեսակարար կշռի աճի և իրավունքի կենսագործման բարձր աստիճանի հասնելու նախապայմանը տեղեկատվական մակարդակում ենթադրում է իրավունքի նորմի արտահայտման ձևի (այսինքն՝ իրավունքի աղբյուրի) բավարար իրավական որոշակիություն: Որոշակիության բացակայությունը կբացառի նորմում առկա վարքագծի իդեալական մոդելի վերաբերյալ նորմի հասցեատիրոջ իրազեկվածությունը:

Ձևական որոշակիությունը դադարում է սոսկ իրավունքի հատկանիշ լինելուց և վերածվում է իրավական կարգավորման կառուցակարգում և իրավունքի նպատակի իրականացման գործընթացում իրավական նորմեր արտահայտող երևույթը որպես «իրավունքի աղբյուր» լեգիտիմացնող միջոցի: Այս տեսանկյունից իմաստավորվում են իրավաբանական գրականության մեջ տեղ գտած իրավունքի աղբյուրի այնպիսի «ոչ ավանդական» բնորոշումներ, որոնք դուրս են վերը քննարկված իրավունքի աղբյուրը նյութական, իդեալական և իրավաբանական իմաստով դիտարկե-

¹ Ст'у Общая теория государства и права. Том II. Под ред. Марченко М.Н., М.: 2002, էջ 318:

² Ст'у **Алексеев С.С.**, Право: азбука – теория – философия: Опыт комплексного исследования. М.: 1999, էջ 76:

³ Ст'у **Власенко Н.А., Назаренко Т.Н.** Неопределенность в праве: понятие и формы// Государство и право, N 6, 2007, էջ 5: Որոշակիությունը առավելապես բովանդակային իմաստով դիտարկելու, ձևական տարրի չչեչտարդիելու անհրաժեշտության վերաբերյալ մոտեցման մասին ավելի մանրամասն տե՛ս նաև **Алексеев С.С.**, Восхождение к праву. Поиски и решения. М.: 2001, էջ 49:

լու շրջանակներից: Շեշտադրումը դրանցում կատարվում է իրավունքի աղբյուրի տեղեկատվական նշանակության վրա (որտեղ պետք է «փնտրել» համապատասխան նորմը գտնելու համար¹), իրավունքի աղբյուրը *իրավունքի ճանաչման միջոց հանդիսանալու վրա* (իրավունքի աղբյուր են ինչպես իրավունքի հուշարձանները, այնպես էլ ժամանակակից դատական պրակտիկան և դոկտրինան²):

Այնուամենայնիվ, իրավունքի աղբյուրի նշանակությունը իրավունքի իրացման համար անհրաժեշտ իրավաչափ վարքագծի ապահովման գործընթացում չի սահմանափակվում սուկ դրա «տեղեկատվական» դերով: Իրավունքի իրացումը՝ որպես գործունեություն, արժեքաբանական լուրջ հիմքեր ունի, ինչն անհրաժեշտ է դարձնում իրավունքի իրացման այդ համատեքստում իրավունքի աղբյուրի նշանակության քննարկումը:

2. *Արժեքային հարթություն:* Մարդուն իրավաբանական էակի է վերածում նրա՝ «ճանաչման ակտ» կատարելու, այսինքն՝ մյուսին որպես իրավունքի սուբյեկտ ճանաչելու ունակությունը: Այսպիսի ակտ կատարելու համար անհրաժեշտ է անձնապես զարգացած, ինքնավար սուբյեկտի առկայությունը: Իրական անձինք կարող են և օժտված չլինել այդպիսի հատկանիշներով: Սակայն իրավունքի իդեալ է ազատ սուբյեկտը՝ homo sui iuris-ը՝ ինքնավար անձը, որն ինքն է քննարկում, ինքն է գնահատում, ինքն է որոշում գործողությունների ուղղությունը³: Իրավական սուբյեկտ լինել նշանակում է կենդանի անձ, իրական իրավագիտակցության կրող լինել: Այդպիսի սուբյեկտի վարքագծի դրոպապատճառների շարքում մեծ տեղ են գրավում արժեքները, այդ թվում՝ իրավական արժեքները, որոնք անձի համար հանդես են գալիս որպես իդեալներ: Արժեքի վրա հիմնված ընտրությունը կոչվում է գնահատում⁴: Այս առումով իրավունքի բուն իրականացումը նույնքան գնահատողական գործունեություն է, որքան և իրավաստեղծագործությունը:

Իրավունքի կենսագործման բարձր աստիճանի հասնելը հնարավոր է այն դեպքում, երբ վարքագծի իդեալական մոդելներին իրագեկված լինելուց բացի սուբյեկտը գնահատի այդ մոդելը որպես ցանկալի, վարքագծի համապատասխան կանոնը՝ որպես իր համար հեղինակություն ունեցող պահանջ, այսինքն՝ ընկալի իրավունքի յուրաքանչյուր մասնավոր դրսևորումը որպես *արժեք*: Իրավաբանական գրականության մեջ իրավաչափ վարքագծի դրսևորման և իրավունքի իրացման բարձր աստիճանի ապահովման խնդիրը հիմնականում քննարկվում է իրավագիտակցության մակարդակի և իրավական մշակույթի որակի համատեքստում: Որևէ կասկած չի հարուցում այն պնդումը, որ իրավական մշակույթի և իրավագիտակցության մակարդակի բարձրացումը դրական մեծ ազդեցություն է թողնում իրավունքի իրացման մակարդակի վրա: Այնուամենայնիվ, ներկայացվող թեմայի շրջանակներում առավել մեծ հետաքրքրություն է ներկայացնում վերը ներկայացված ընդհանուր խնդրի առավել նեղ կողմը. *իրավունքի աղբյուրի այս կամ այն տեսակի ընտրությունը նշանակություն ունի դրանում առկա իրավունքի նկատմամբ համապատասխան արժեքային դիրքորոշում ձևավորելու համար*: Առաջադրվող թեզը հիմնավորելու համար դիմենք օրինակների:

1. ԱՄՆ-ում ապացուցման կանոնները սահմանում է ոչ թե Կոնգրեսը, այլ Պերա-

¹ St' u Венгеров А.Б., Теория государства и права. М., 2005, էջ 399:

² St' u Общая теория права и государства. Под ред. Лазарева В.В., М.: 1996, էջ 35:

³ St' u Вышеславцев, Б. П. Кризис индустриальной культуры. Марксизм. Неосоциализм. Неолиберализм. Нью-Йорк, 1953, էջ 229, հղումն ըստ Философия права. Под ред. Данильяна О.Г., М.: 2005, էջ 251:

⁴ St' u Философия права. Под ред. Данильяна О.Г., М.: 2005, էջ 256-257:

գույն դատարանը: ԱՄՆ Ղատական կոնֆերանսը՝ դատական կորպուսի նկատմամբ վարչական և վերահսկիչ լիազորություններ իրականացնող մարմինը, ձևավորում է Խորհրդատվական կոմիտե՝ իրավաբան գիտնականների, գործող դատավորների և այլ պրակտիկ իրավաբանների մասնակցությամբ, որն իրականացնում է Ապացուցման դաշնային կանոնների նախագծի մշակումը: Նախագիծը ուղարկվում է Գերագույն դատարան՝ հաստատման: Ամերիկյան դոկտրինայի մեջ արտահայտվում է այն կարծիքը, որ որպես մասնագիտացված մարմին՝ Գերագույն դատարանը կարող է սահմանել ապացուցման ավելի տրամաբանական ստանդարտ, որը բխում է հարյուրամյակների դատական պրակտիկայի փորձից և առավելապես հարգվում է դատարանների կողմից, որոնք կանոնները համարում են հեղինակավոր: Ապացուցման դաշնային կանոնները, իհարկե, ուղարկվում են Կոնգրեսի մասնագիտացված հանձնաժողովի քննությանը՝ այն հաստատելու համար: Սակայն դիտողություններ չներկայացվելու դեպքում Ապացուցման դաշնային կանոնները համարվում են ընդունված ԱՄՆ Գերագույն դատարանի կողմից¹: Այս կառուցակարգը ԱՄՆ-ում գործող իշխանությունների բաժանման կոշտ մոդելի պայմաններում չի համարվում օրենսդրական գործունեության յուրացում, այլ դիտարկվում է որպես իրավական կարգավորման արդյունավետության բարձրացմանն ուղղված համագործակցություն իշխանության տարբեր ճյուղերի միջև: Ավելին՝ ապացուցման կանոնների սահմանումը հենց դատական իշխանություն կրողի կողմից դիտվում է որպես դատական իշխանության անկախության կարևորագույն դրսևորում: Փաստորեն՝ իրավունքի աղբյուրների նկատմամբ ամերիկյան պրագմատիկ մոտեցման տեսանկյունից կարելի է խոսել ԱՄՆ-ում իրավունքի աղբյուրի այնպիսի տեսակների մասին, ինչպիսիք են Ղատավարության կանոնները: Ի տարբերություն դրա՝ մայրցամաքային իրավունքի մի շարք պետություններում (Գերմանիա, Իտալիա) նույն կանոնները ներառվում են դատավարական օրենսգրքերի մեջ՝ դատավարական նորմերի ձևով:

2. Այն պետություններում, որտեղ աշխատուժի շուկան արդյունավետ է գործում, մեծ նշանակություն ունեն կոլեկտիվ պայմանագրերը, որոնք սկզբնական փուլում հանդիսանում էին աշխատողների և գործատուի միջև աշխատանքային պայմանների և աշխատավարձի վերաբերյալ կոլեկտիվ բանակցություններ վարելու ընթացքում ձևավորված դրույթների ամրագրում: Այնուամենայնիվ, ներկայումս զարգացած երկրներում, ինչպիսիք են, օրինակ, Ֆինլանդիան, Ավստրիան, Հոլանդիան, Շվեդիան, արհեստակցական միությունները, որոնց շրջանակներում ավանդաբար իրականացվում է կոլեկտիվ պայմանագրերի կնքում, գործում են ազգային շահերի շրջանակներում, և դրանց կողմից կնքվող կոլեկտիվ պայմանագրերը սահմանում են որոշակի նվազագույն պահանջներ, որոնք պարտադիր են անգամ միության անդամ չհանդիսացող գործատուների համար²: Կոլեկտիվ պայմանագրերը դառնում են իմպերատիվ նորմերի աղբյուր և մեծ հեղինակություն են վայելում ինչպես գործատուների շրջանում, այնպես էլ հասարակության կողմից: Կոլեկտիվ պայմանագրի դրույթների տեղափոխումը օրենքի մակարդակ այդ պետություններում արդարացված չէ, ավելին, դա որոշ դեպքերում կարող է բացասաբար անդրադառնալ դրանց կիրառման առանձնահատկությունների և իրացման մակարդակի վրա:

Կարելի է բերել նման բազում այլ օրինակներ: *Հետևությունը, որը բխում է դրանց ուսումնասիրությունից, հանգում է հետևյալին. հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման ձևը եզակի դեպքերում է ենթակա որոշակի միասնական պահանջների:* Այսպիսի եզակի դեպքերից մեկն է, օրինակ, nullum

¹ Տե՛ս **Բերնամ, Մ.**, Правовая система США. М.: 2007, էջ 105:

² Տե՛ս http://en.wikipedia.org/wiki/Collective_Bargaining:

crimen sine lege հանրաձանաչ սկզբունքի կենսագործման արդյունքում քրեորեն պատժելի արարքները օրենքով սպառիչ նախատեսելը: *Մյուս դեպքերում իրավունքի աղբյուրի ընտրությունը պետք է կատարվի հիմք ընդունելով մի կողմից տվյալ պետությունում ձևավորված ավանդույթները և մյուս կողմից՝ կարգադրագիրը հասցեստերերին մատչելի և հեղինակավոր միջոցի կիրառմամբ հասցնելու հնարավորությունը և նրանց մեջ համապատասխան իրավաչափ վարքագիծ դրսևորվելու արդյունավետությունը:*

Արժեքային կողմը հաշվի չառնելը առաջացնում է իրավական կարգավորման գործընթացի լուրջ խաթարում, որի հետևանքով հնարավոր չի լինում հասնել դրա նպատակակետին՝ իրավունքի իրացմանը: Իրավունքի արտաքին դրսևորման ձևերի նկատմամբ դրական կամ բացասական վերաբերմունքը հաճախ կանխորոշում է դրա բովանդակության նկատմամբ վերաբերմունքը:

Դարձյալ քննարկենք նշված օրինաչափությունը, այս անգամ՝ հայաստանյան օրինակով: Հայագիտության շրջանակներում մշտապես քննարկվել է այն հարցը, որ օրինապաշտությունը որպես հատկանիշ բնորոշ չէ հային թե՛ պատմական հիշողության և թե՛ ներկայի ընկալման ուժով: Պետականության բացակայությունը դարերի ընթացքում ձևավորել է օրենքի՝ որպես «օտարի լծի գործիքի» նկատմամբ բացասական վերաբերմունք: Խորհրդային իրականությունում «օրենք» էր անվանվում երևույթը, որն իրականում օրենք չէր, քանի որ դրա բովանդակությունը չէր արտահայտում բարձրագույն ներկայացուցչական մարմնի հավաքական կամքը, այլ վաբանական ձև էր տալիս կուսակցական որոշումներին: Բնական է, որ նման պայմաններում ևս օրենքի՝ որպես *իրավունքի ինքնուրույն աղբյուրի* հեղինակությունը չէր կարող աճել: Նոր պետականության պայմաններում, ինչպես նշում է Հր. Շաքարյանը, հայերի մեջ ձևավորվեց քաղաքական մտածողության նոր տարատեսակ, որը կարելի է անվանել հայկական տարբերակ՝ քաղաքական մտածողություն պետական մտածողության ընդգծված պակասով¹: Պետական մտածողության պակասը արժեզրկում է օրենքի՝ որպես պետական կամքի դրսևորման հեղինակությունը: *Այստեղից՝ ծայրահեղ նիհիլիստական վերաբերմունք օրենքի՝ որպես իրավունքի նորմերի արտաքին արտահայտման ձևի նկատմամբ: Օրենքը մեր հասարակությունում դեռևս շարունակում է ընկալվել որպես «դատարկ» և «չգործող» աղբյուր՝ անկախ դրա որակական հատկանիշներից և իրավական բովանդակությունից: Եվ տրամաբանական է, որ իրավական պետության կառուցման հիմնախնդրի համատեքստում հայ հասարակության «իրավապաշտության» ապահովման խնդիրը չի կարող կապվել «օրինահնազանդության» հետ²:*

Միևնույն ժամանակ փիլիսոփայության, հոգեբանության և հայագիտության շրջանակներում հայերի համար առանձնակի են համարվում այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են արտակարգ կենսունակությունը, ընդգծված ձգտումը դեպի գիտելիքներ և ընդհանուր առաջընթացին մասնակցելու անդիմադրելի հակումը, ար-

¹ Տե՛ս **Շաքարյան Հր., Շաքարյան Լ.**, Պրոֆեսիոնալիզմի էթիկական տեսանկյունը պառլամենտական մտածելակերպում, Երևան, 1999, էջ 32:

² «Իրավաչափ» վարքագիծը բնութագրելիս կիրառվում է լատիներեն «legitimus» եզրույթը, որը բառացի թարգմանությամբ նշանակում է «օրենքների համաձայնեցված»: Օրենքի գերակայության սկզբունքի հիմնավորման հետ կապված ռուս իրավագիտության մեջ առաջ է քաշվել այն տեսակետը, որ «իրավաչափ վարքագիծ» եզրույթը տեղի ունեցող զարգացումների լույսի ներքո մոտ ապագայում նպատակահարմար կլինի փոխարինել «օրինահնազանդ» կամ «օրինահամապատասխան» եզրույթներով (Տե՛ս Общая теория государства и права. Том III. Под ред. Марченко, М.Н. М.: 2002, էջ 388): Տրամաբանական է, որ հայկական դոկտրինայում նման մոտեցումը դժվար կլիներ հիմնավոր համարել:

դարության նկատմամբ ունեցած անհաղթահարելի հարգանքը, արժեքների համակարգում բարոյականությանը հատկացված գլխավոր դիրքը, ընդգծված գործնականությունը: Լինելով հակադիր բեռների ամբողջություն՝ հայկական հոգեմտակերպը քաղաքակրթական հատկանիշների համակցությամբ ձևավորված սեփական հայեցակարգի, բարոյականության ու արդարության ընկալումների բավականաչափ իներցիոն կենսակերպի մոդելի արդյունք է, որն իր հիմքում ունի հայ էթնոսին հատուկ ռացիոնալ-իրացիոնալ համամասնության համաչափություն: Մեր հոգեմտակերպին հատուկ է *ունիվերսալությունը*՝ բարոյական և հոգևոր արժեքների պահպանողականության հետ մեկտեղ¹:

Այս ամենը թույլ է տալիս փաստել հետևյալը:

ա. «Օրինապաշտությունը» հայկական հասարակության համար խորք վիճակ է, և «իրավաչափ վարքագիծը» մեր ազգային հոգեմտակերպում «օրինահնազանդ» վարքագծի հոմանիշ է:

բ. Արդարության զգացումը, որը բնորոշ է մեր հոգեմտակերպին, և որը իրավունքի աքսիոլոգիական հիմքերից մեկն է, խոսում է «իրավապաշտության» նախահիմքերի առկայության մասին, իսկ առաջընթացին պատրաստ լինելը, ունիվերսալությունը վկայում են այն մասին, որ իրավական կարգավորման արդյունավետության բարձրացմանն ուղղված նորարարական լուծումները կարող են ընկալելի դառնալ արդի հայ հասարակությունում:

Հետևաբար՝ իրավունքի աղբյուրների՝ իրավական կարգավորման նպատակներին արդյունավետ հասնելու խնդրի տեսանկյունից հետազոտման, ընտրության և ճիշտ համադրման դեպքում հնարավոր է հասնել իրավունքի իրացման ավելի բարձր աստիճանի: Պետական քաղաքականության կայունացումը (օրենքը որպես պետական քաղաքականության գործիք կիրառելու առումով), իրավունքի բացերի և գերկարգավորվածության վերացումը, հասցեատերերի հոգեբանական կողմնորոշումների և աշխարհայացքի պետության դիրքորոշմանը և դրա կենսագործմանն ուղղված ջանքերին մոտ լինելը այն պայմաններն են, որոնք անհրաժեշտ են իրավական ներգործության արդյունավետությունը բարձրացնելու համար²:

ФУНКЦИОНАЛЬНОЕ ЗНАЧЕНИЕ ИСТОЧНИКОВ ПРАВА В ПРОЦЕССЕ ОСУЩЕСТВЛЕНИЯ ОСНОВНОЙ ЦЕЛИ ПРАВОВОГО РЕГУЛИРОВАНИЯ

Виктория Оганян

*Асистент кафедры теории и истории государства и права ЕГУ,
кандидат юридических наук*

Данная статья посвящена рассмотрению вопроса о роли источников права в процессе правового регулирования в двух аспектах – информационном и ценностном, которые особенно четко прослеживаются на стадиях правотворчества и непосредственно реализации права. В ценностном аспекте проблема выбора источника на стадии правотворчества рассматривается в контексте процесса правовой оценки общественных отношений подлежащих

¹ Տե՛ս Խաչատրյան Լ., Ազգային գաղափար և հայկական թեոկրատիա, Երևան, 2000, էջ 51, 60-66:

² Տե՛ս Общая теория права и государства. Под ред. Лазарева В.В., М.: 1996, էջ 394:

правовому регулированию. На стадии непосредственной реализации права ценностный срез дает возможность исследовать взаимодействие механизма правовой социализации и источников права, а также предопределять степень реализации права и проявления правомерного поведения. В информационном аспекте проблема источников права соотносится с идеей правовой определенности, источник права рассматривается как основной фактор обеспечения формальной определенности и как средство познания права. Основная идея статьи сводится к влиянию, которое выбор источника может оказать на степень реализации выраженных посредством него норм права.

FUNCTIONAL ROLE OF THE SOURCES OF LAW IN THE PROCESS OF REALISATION OF THE MAIN PURPOSE OF LEGAL REGULATION

Victoria Ohanyan

*Assistant of the YSU Chair of Theory and History of State and Law,
Candidat of Legal Sciences*

The article refers to the role of the forms of law in the process of realization of law from two aspects: informational and axiological, which can be clearly observed at the stages of lawmaking and de facto realization of legal norms. From axiological point of view, at the stage of lawmaking the issue of defining the form is examined in the context of legal evaluation/qualification of the social relationship subject to regulation. At the stage of de facto realization of legal norms, axiological approach allows to examine the link between the mechanism of legal socialization and the forms of law, as well as to predict the extent of realization and the demonstration of lawful behavior. In the informational aspect, the problem of the forms of law is related to the idea of legal certainty, form is considered as a main factor of ensuring formal certainty of legal norms and as the means of cognition of the law. The main idea of the article is the interdependence and the influence that the chosen form can have on the extent of realization of legal norms expressed through it.

Բանալի բառեր – իրավունքի աղբյուր, իրավական որոշակիություն, իրավաչափ վարքագիծ, իրավունքի իրականացում, իրավական կարգավորման նպատակներ, իրավական սոցիալիզացիա, սոցիալական կարգավորման կառուցակարգ

Ключевые слова – источник права, правовая определенность, правомерное поведение, реализация права, цели правового регулирования, правовая социализация, механизм социального регулирования

Keywords – form of law, source of law, legal certainty, lawful behavior, realization of law, aims of legal regulation, legal socialization, mechanism of social regulation